



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԳԻՏԱԺՈՂՈՎ

մարտի 26, 2021թ.

Գիտաժողովին հրավիրվում են բուհ-երի, գիտահետազոտական կենտրոնների և այն գերատեսչությունների գիտնականները, ասպիրանտները, հետազոտողները, մագիստրանտները և ուսանողները, ովքեր մտահոգված են 21-րդ դարում անընդհատ ահագնացող հիմնախնդրի վերաբերյալ, որը կապված է մարդու և հասարակության ավտանգության հետ:

Վերջին տասնամյակների ընթացքում գիտատեխնիկական առաջընթացը, թվում է թե, մարդու կյանքը դարձրել է բարեկեցիկ, սակայն ավելի են խորացել վտանգներն ու ռիսկերը, որոնք մշտապես ուղեկցում են մեզ: Գիտաժողովի նպատակն է վերլուծել և գնահատել ժամանակակից կյանքում մարդուն սպառնացող տարատեսակ վտանգներն ու ռիսկերը, գտնել դրանց մեղմացման ուղիները, միջոցները ու մեխանիզմները:

«Անվտանգության արդի հիմնախնդիրները» գիտաժողովը նախատեսում է մասնագետների լայն շրջանակ հետևյալ ուղղություններով.

1. Պետության անվտանգություն,
2. Քաղաքական անվտանգություն,
3. Տնտեսական անվտանգություն,
4. Մոցիալական անվտանգություն,
5. Առողջապահական անվտանգություն,
6. Մշակութային անվտանգություն,
7. Բնապահպանական անվտանգություն,
8. Քաղաքաշինական անվտանգություն,
9. Ճարտարապետական անվտանգություն,
10. Տեղեկատվական անվտանգություն:

Գիտաժողովը կկայանա մարտի 26-ին, Եվրոպական համալսարանում, Դ. Անհադթի 10 հասցեով (հեռ. +374 10 2400 38, +374 93 114359):

Գիտաժողովին ներկայացված հոդվածները կհրապարակվեն որպես գիտաժողովի նյութեր: Գրանցման հայտաթերթիկն անհրաժեշտ է ուղարկել g.manasyan@eua.am, l.petrosyan@eua.am էլ-հասցեներով մինչև սույն թվականի մարտի 5-ը, իսկ գիտական հոդվածը՝ մինչև մարտի 19-ը:

Հայտաթերթիկը և հոդվածների պահանջները ներկայացվում են ստորև:

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

Թեմայով գիտաժողովի հայտագրման թերթիկ

Մարտի 26, 2021թ.

Կազմակերպության կամ հաստատության անվանումը	
Ազգանուն	
Անուն	
Հայրանուն	
Հեռախոսահամար	
Զբաղեցրած պաշտոնը	
Գիտական աստիճան	
Գիտական կոչում	
Էլ. հասցե	
Զեկույցի անվանումը	
Գիտաժողովին մասնակցության ուղղությունը	
Գիտաժողովին մասնակցության ձևը (առկա/ հեռավար)	

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով՝ 4-9 էջերի սահմաններում: Հոդվածը պատրաստվում է MS Word տեքստային խմբագրիչով: Սահմանվում են էջերի հետևյալ չափանիշները և պահանջները (Page Setup և Paragraph). Paper size A4 Font (հայերեն լեզվի համար) GHEA Grapalat, Font (ռուսերեն և անգլերեն լեզուների համար) Times New Roman, Top 2 սմ, Bottom 2 սմ, Left 3 սմ, Right 1,5 սմ, Size 12pt., Line spacing 1,15, Tab 1 սմ:
- **Վերնագիր.** վերնագիրը դրվում է կենտրոնում, մեծատառերով, մզեցված (BOLD),
- Հոդվածի հեղինակի (հեղինակների) անուն ազգանուն, բուհ, ամբիոն, գիտական աստիճան և կոչում (առկայության դեպքում), էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար (Bold, Italic, կողմնորոշումը՝ կենտրոն):
- **Անոտացիա.** Անոտացիան հաջորդում է հեղինակի մասին տեղեկատվությանը, բաց թողնելով 1 միջտողային տարածություն: Այն պետք է ընդգրկի 60-100 բառ, որում հակիրճ պետք է ներկայացված լինեն կատարված հետազոտության հիմնական դրույթները:
- **Հիմնաբառեր.** հիմնաբառերը պետք է լինեն 5-6 բառ կամ բառակապակցություն:
- **Հոդվածի հիմնական բովանդակությունը.** Հոդվածի հիմնական բովանդակությունը հաջորդում է հիմնաբառերին՝ բաց թողնելով 1 միջտողային տարածություն: Հոդվածում ներկայացվում են նշանակալից գիտական արդյունքներ, որոնք նախկինում ոչ մի տեղ չեն հրատարակվել: Հոդվածը պետք է ներառի. ներածություն, աշխատանքի նպատակ և արդիականություն, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճան, առաջադրվող խնդիրներ, խնդիրների լուծման առաջարկվող մեթոդներ կամ եղանակներ, ստացված արդյունքներ, եզրահանգումներ: Վերոնշյալ բաժինների ներկայացումը առանձին ենթավերնագրերով չի պահանջվում: Անհրաժեշտության դեպքում հոդվածի բովանդակությունը բաժանվում է առանձին բաժինների, որոնք ունենում են ենթավերնագրեր: Հոդվածի տեքստում տողադարձեր չեն արվում:
- **Աղյուսակներ և գծապատկերներ.** Աղյուսակները և գծապատկերները դրվում են տեքստում դրանց մասին հիշատակելուց հետո: Աղյուսակների վերնագրերը դրվում են աղյուսակի վերևում, իսկ գծապատկերներինը՝ գծապատկերի ներքևում: Աղյուսակների և գծապատկերների վերնագրերը պետք է գրել 10 տառաչափով՝ Italic: Աղյուսակների ու գծապատկերների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել հոդվածի ծավալի 20 տոկոսը:
- **Օգտագործված գրականության ցանկ:** Օգտագործված գրականության ցանկը հաջորդում է հոդվածի հիմնական բովանդակությանը: Հոդվածի տեքստում օգտագործված գրականությունից կամ աղբյուրներից հղումները դրվում են տեքստի համապատասխան մասում՝ քառակուսի փակագծերում՝ հաջորդական համարակալմամբ, համարի կողքին նշելով տվյալ աղբյուրի էջերը, որին հղում է արվել՝ բնագրի լեզվով (Օրինակ՝ [1], [4, 2-10 էջեր], [4, p.110-111], [6, c. 22]):
- **Հղումների աղբյուրները և գրականության ցանկը** ձևակերպվում են ըստ հետևյալ պահանջների նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը (ազգանունները) և

անվան և հայրանվան սկզբնատառերը, գրքի կամ հոդվածի լրիվ անվանումը, հրատարակման վայրը, տարեթիվը, հրատարակչությունը, էջերը:

- Օգտագործված գրականության ցանկին հաջորդում են բնագրից տարբերվող 2 աշխատանքային լեզուներով հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) անուն ազգանունը, բուհը, ամբիոնը, գիտական աստիճանը և կոչումը (առկայության դեպքում), անոտացիան և հիմնաբառերը:
- Հոդվածի տեքստում արված հղումները, բացատրությունները, մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) դրվում են նույն էջի տողատակում՝ հաջորդական համարակալմամբ, տառաչափը՝ 10pt: Հոդվածի բոլոր էջերը պետք է համարակալված լինեն՝ էջի ներքևում, կողմնորոշումը՝ կենտրոն: